600.0142.19.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2017 թվականի №142Ա
քաղ. Երևան

«ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի №688Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2007 թվականի դեկտեմբերի 28-ի №688Ա որոշմամբ «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականությունների օգտագործման №0297 թույլտվության (այսուհետ՝ թույլտվություն) պայմանների 3.1 կետի 8-րդ ենթակետով սահմանված է «Տրանս» ազդանշանը,

բ) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի փետրվարի 13-ի №03/11.1/1960-17 գրության համաձայն՝ իրականացված ռադիոեթերի մոնիթորինգի և չափումների արդյունքում հայտնաբերվել է, որ ընկերությանը պատկանող ռադիոցանցն աշխատել է իրեն չհատկացված ազդանշանով,

գ) հանձնաժողովը 2017 թվականի փետրվարի 17-ի №ԱԲ-365Հ գրությամբ ընկերությունից պահանջել է պարզաբանումներ ներկայացնել՝ իր կողմից թույլտվության պայմանների խախտմամբ շարժական ռադիոկապի ցանցի շահագործման վերաբերյալ, սակայն վերջինս հանձնաժողովին որևէ պարզաբանում չի ներկայացրել,

դ) հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել ընկերության նկատմամբ՝ վերջինիս կողմից թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության

նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է հանձնաժողովի 2017 թվականի մարտի 22-ի №ԱԲ-668Հ գրությամբ,

ե) վարչական վարույթի շրջանակում ընկերությունը 2017 թվականի ապրիլի 12-ին դիմել է հանձնաժողովին՝ հայտնելով, որ իր կողմից վերացվել է խախտումը և շարժական ռադիոկապի ցանցը շահագործվում է թույլտվության պայմաններով սահմանված ազդականշով: Միաժամանակ՝ խնդրելով փոփոխություն կատարել թույլտվության պայմանների մեջ՝ «Տրանս» ազդականշը փոխարինելով «Զյունիկ» ազդականշով, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել հանձնաժողովի կողմից 2017 թվականի մարտի 22-ից ընկերության նկատմամբ՝ թույլտվության պայմանների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:
2. Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 28-ի «ՄՈՒԼՏԻ ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №688Ա որոշմամբ տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0297 թույլտվության պայմանների 3.1 կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«8) ազդականշը՝ Զյունիկ.»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Շ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ք. Երևան
19 ապրիլի 2017թ.